

ԻՐԱՎԱՀԱՋՈՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԻՋԱԶԴԱՅԻՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻՆՈՒՄ

Վ. Հ. ՄԱՐՈՒԵՅԱՆ

Սոցիալիզմի համաշխարհային սիստեմի ստեղծումը հուսալի պատվար դարձավ իրենց անկախության համար պայքարող ժողովուրդների համար: Ինչպես նշում է ՍՄԿԿ ծրագիրը, «սոցիալիզմի առաջացումը նշանավորում է ճնշված ժողովուրդների ազատագրության դարագլխի սկիզբը»¹:

Սզդոյին-ազատագրական շարժումները համաշխարհային մասշտաբով մղվող հակաիմպերիալիստական պայքարի օղակներից մեկն են: Նրանց հզոր հարվածների ներքո Ասիայում և Աֆրիկայում առաջացել և առաջանում են բազմաթիվ աղբյուրներ անկախ պետությունների, որոնք թեև ակոխել են իրենց զարգացման նոր ժամանակաշրջանը:

Ասիայի և Աֆրիկայի երիտասարդ ազգային պետությունների ձևավորումը ժողովուրդների ինքնորոշման իրավունքի գործնական իրականացման արդյունք է: Նրանք միջազգային ասպարեզում վարում են իրենց ժողովուրդների աղբյուրին՝ շահերից ելնող քաղաքականություն, վերածվելով ինքնուրույն քաղաքական գործոնի: Տվյալ հանգամանքը որոշակիորեն նպաստում է ժամանակակից միջազգային իրավունքի զարգացմանը: Այդ պետությունների մուտքը միջազգային հաղորդակցության ոլորտ ծնում է մի շարք միջազգային-իբրավական հետևանքներ, որոնց մեջ, ինչպես վկայում է պրակտիկան, կարեւոր տեղ ունեն պետությունների իրավահաջորդության հետ կապված պրոբլեմները: Իրավահաջորդության ինստիտուտի զարգացումն էական դեր է խաղում այդ պետությունների տնտեսական և ազգային-քաղաքական ընդհանուր հարցերի լուծման, գաղութատիրության, նեոգաղութատիրության և դրանց հետևանքների վերացման գործում: Պատահական չէ, որ իրավահաջորդության ինստիտուտի ուսումնասիրման ու փրավակարգավորման հարցերով ներկայումս զբաղվում է ՄԱԿ-ի միջազգային իրավունքի հանձնաժողովը²:

Իրավահաջորդությունը միջազգային իրավունքում մեկ պետության իրավունքների և պարտականությունների փոխանցումն է մեկ այլ պետության³: Իրավահաջորդության հարցն առաջանում է միջազգային իրավունքի սուբյեկտ ծագելու և վերանալու կապակցությամբ: Մեյլ օրերում միջազգային-իրավական առանձնատի հետաքրքրություն են ներկայացնում իրավահաջորդության այն հարցերը, որոնք կապված են իմպերիալիզմի գաղութային սիստեմի քայքայման հետևանքով միջազգային իրավունքի նոր սուբյեկտների՝ ազգային անկախ պետությունների առաջացման հետ:

¹ «ՄՄԿԿ XXII համաշխարհային նյութերը», Երևան, 1967, էջ 465.

² Տե՛ս «Резолюции, принятые Генеральной Ассамблеей на XVII сессии, 18 сентября 1962 г.—20 декабря 1962 г.», Нью-Йорк, 1963, էջ 75—76.

³ Տե՛ս «Дипломатический словарь», т. 2, М., 1971, էջ 562.

իրավահաջորդության հարցերը լուծվում են ad hoc՝ կախված այս կամ այն պետության ծագմանը նախորդող հանգամանքներից, Դրանով պետք է բացատրել երիտասարդ ազգային պետությունների իրավահաջորդության ժամանակակից պրակտիկայի անկայուն ու հակասական լինելը⁴:

Իրավահաջորդության ժամանակ ծագող հիմնական խնդիրը միջազգային պայմանագրերի՝ իրավահաջորդության հիմնական օբյեկտների ժառանգման հարցն է: Միջազգային պայմանագիրը պետության արտաքին քաղաքականության իրականացման հիմնական միջոցներից է, որը ժամանակի որոշակի հատվածում իրավաբանորեն ամրապնդում է ուժերի քաղաքական հարաբերակցությունը միջազգային ասպարեզում: Յուրաքանչյուր պայմանագրում դրսևորվում է այն կնքող պետությունների դասակարգային էությունը:

Միջազգային պրակտիկան վկայում է, որ պայմանագրի ժառանգման հարցում վճռորոշ դեր են խաղում քաղաքական շարժառիթները:

Երիտասարդ ազգային պետությունների դիրքորոշումը իրենց տերիտորիաներում նախկինում գործող պայմանագրերի նկատմամբ որոշվում է մետրոպոլիայի հետ կնքած միջազգային ակտերով: Որոշ դեպքերում այդ ակտերը նախատեսում են իրավանախորդի պայմանագրային ամբողջ սիստեմի ժառանգում⁵: Ինչպես իրավացիորեն նշում է հունգարացի միջազգայնագետ Հ. Բոկոր-Սեգոն, նման պայմանագրերին բնորոշ են նեոգաղութատիրական ձգտումները⁶: ՄԱԿ-ի միջազգային իրավունքի հանձնաժողովում Ալժիրի ներկայացուցիչ Մ. Բեդժանուն ուշադրություն էր հրավիրում այն հանգամանքի վրա, որ այդ պայմանագրերը, որպես կանոն, անիրավահասարակ են, քանի որ կնքվում են այն պահին, երբ կողմերի ուժերի փոխհարաբերությունը խիստ անհավասար է⁷: Ուստի, միջազգային-իրավական տեսանկյունից նման համապարփակ իրավահաջորդությունն անիրավաչափ է:

Միջազգային պրակտիկայում կան նաև դեպքեր, երբ երիտասարդ ազգային պետություններն իրենց նախկին մետրոպոլիտների իրավական ժառանգությունն ընդունում են պայմանով: Այսպես, օրինակ, Կենտրոնական-Աֆրիկյան հանրապետությունը հայտարարեց, որ ժառանգում է նախկին մետրոպոլիայի կնքած պայմանագրերի ընդ այն դրույթները, որոնք չեն հակասում իր՝ որպես անկախ պետության անկախությանը⁸:

Նման կարգով Մարոկոն ու Վերին Վոլտան ժառանգեցին Ֆրանսիայի պայմանագրային պարտավորությունները:

Մի շարք դեպքերում էլ իրավահաջորդ պետություններն իրենց դիրքը մետրոպոլիայի իրավական ժառանգության նկատմամբ որոշում են միակողմանի դեկլարացիայի միջոցով: 1961 թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի գլխավոր քար-

⁴ Տե՛ս „International Law Association. Helsinki Conference, 1966“, Helsinki. 1966. էջ 3:

⁵ Նմանօրինակ կարգով իրավահաջորդության հարցը իրենց մետրոպոլիտների հետ լուծեցին Անդրհորդանանը, Բիրման, Ցեյլոնը, Գանան, Կիպրոսը և այլ պետություններ (Տե՛ս „United Nations. Treaty Series“, 1947, vol. 6, էջ 146, ibid., 1950, vol. 70, էջ 186, ibid., 1951, vol. 86, էջ 28; ibid., 1958, vol. 287, էջ 234):

⁶ Տե՛ս H. Bokor-Szego, Succession of New States and International Treaties („Questions of International Law“, Budapest, 1964. էջ 160):

⁷ Տե՛ս Док. ООН А/СN/4/204, էջ 39:

⁸ Տե՛ս Док. ООН А/СN/4/150, էջ 24:

սուղարին Տանգանիկայի պրեմիեր-մինիստր Ներերայի հղած հեռագրում ասված է, որ անկախություն ստանալու պահից սկսած, երկու տարվա ընթացքում, Տանգանիկայի կառավարությունն իր տերիտորիայի շրջանակներում կկիրառի այն երկկողմ պայմանագրերը, որոնք Միացյալ թագավորության կողմից իրավաչափորեն կնքվել են Տանգանիկայի անունից: Այդ ժամկետը լրանալուց հետո Տանգանիկայի կառավարությունը, համաձայն միջազգային իրավունքի սովորութային նորմերի, կորոշի այն պայմանագրերի ցանկը, որոնք կպահպանեն իրենց իրավաբանական ուժը⁹:

Իրավահաջորդության այս եղանակը միջազգային հարաբերություններում ստացավ «Տանգանիկայի ֆորմուլա» անվանումը: Այն ելնում էր ազգերի ինքնորոշման սկզբունքից և չէր սահմանափակում իրավահաջորդի պետական իշխանությունը:

Հետագայում իրավահաջորդության այդ եղանակը կիրառեցին նաև Քենիան և Ոսգանդան¹⁰:

Իրավահաջորդության այլ եղանակ կիրառեց Ալժիրը: 1962 թ. մարտի 18-ին կնքված էվիանյան համաձայնագրերը չկարգավորեցին Ֆրանսիայի միջազգային պարտավորությունների ժառանգման հարցը: 1962 թ. հոկտեմբերի 16-ին ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի իրավաբանական կոմիտեում Ալժիրի ներկայացուցիչ Քելլան ընդգծեց, որ մետրոպոլիայի կնքած միջազգային համաձայնագրերը նոր պետության համար չեն ծնում պարտավորություններ և իրավունքներ¹¹: Ըստ էության, Ալժիրի ներկայացուցիչը ելնում էր clean slate նիհիլիստական տեսությունից, որի հիմքում ընկած է բացարձակ ստվերենություն գաղափարը: Այդ տեսության կողմնակիցները, վերալուծելով ազգերի ինքնորոշման իրավունքը, պնդում են, որ յուրաքանչյուր նոր պետություն իր գոյությունն սկսում է պայմանագրային կապերի լիակատար բացակայության պայմաններում: Սակայն, ինչպես իրավացիորեն նշում է Ն. Վ. Զախարովան, իրավահաջորդության պրոբլեմի նման լուծումը ոչ միշտ է համապատասխանում նոր ծագած միջազգային իրավունքի սուբյեկտի շահերին¹²:

Ելնելով պրակտիկայից և միջազգային ակտերի վերլուծությունից, կարելի է ասել, որ գաղութային լծից ազատագրված երկրները մետրոպոլիայի կրնքած միջազգային ակտերից բխող բոլոր իրավունքների և պարտականությունների իրավահաճորդն են: Նոր պետությունները ամբողջովին կամ մասամբ ստանձնում են իրենց վերաբերող մետրոպոլիայի պայմանագրային իրավունքներն ու պարտականությունները: Սակայն արդ իրավահաջորդությունը ինքնաբերաբար չի առաջանում: Իրավահաջորդության ծավալը որոշվում է իրավահաջորդների սովերեն կամքին և միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին ու նորմերին համապատասխան: Միջազգայնագետ Ի. Քիրստենը (ԳԴՀ) իրավացիորեն պնդում է, որ հանրաճանաչ դեմոկրատական միջազգային իրավունքին հակասող «իրավունքներ» և «պարտականություններ»

⁹ Տե՛ս Док. ООН А/СN/4/160, Annex II, Appendix, էջ 1.

¹⁰ Տե՛ս II. Bokor-Szegö, La succession des nouveaux états, et les traités internationaux. „Acta juridica“, Budapest, 1963, t. V, f. 3—4, էջ 347.

¹¹ Տե՛ս „Revue Generale de droit international public“, Paris, 1963, № 1. էջ 130.

¹² Տե՛ս Н. В. Захарова, Международная правосубъектность и правопреемство государств. („Международная правосубъектность“, М., 1971, էջ 149).

իրավահաջորդման ենթակա չեն¹³։ Դրա հետ մեկտեղ, ելնելով միջազգային հարաբերություններում խաղաղության և օրինականության ապահովման շահերից, նա պետություններին կոչ է անում իրավահաջորդության ծավալի հետ կապված վեճերը կարգավորել խաղաղ միջոցներով¹⁴։

Միջազգային իրավունքի բուրժուական գիտությունը տարբեր կերպ է գնահատում գաղութային սիստեմի փլուզման հետևանքով առաջացած պետությունների իրավահաջորդության պրակտիկան։ Բուրժուական գիտական-ների մի մասի կարծիքով՝ վերը նշված դեպքերում վրա է հասնում մասնակի իրավահաջորդություն¹⁵։ Որոշ բուրժուական հեղինակների կարծիքով էլ՝ նոր առաջացած պետությունները պետք է ղեկավարվեն համապարփակ իրավահաջորդության կանոններով։ Այս տեսակետն առավել հետևողականորեն պաշտպանում է Ֆրանսիացի իրավաբան Պ. Լուի-Լյուկը։ Ըստ նրա՝ անկախություն ձեռք բերած պետությունը նախկինում իրեն միջազգային հարաբերություններում ներկայացնող պետության կնքած բոլոր միջազգային ակտերի իրավահաջորդն է¹⁶։ Սակայն, այդ ակտերի զգալի մասը լինելով անիրավահավասար, հակասում է *jus cogens* ակզբունքներին և, հետևաբար, իրավաբանական ուժ չունի։ Ուստի, նրանց նկատմամբ կիրառելի չէ *pacta sunt servanda* սկզբունքը, որը վկայակոչում է Պ. Լուի-Լյուկը։ Հենց նման ոգով են հարցը դնում զարգացող երկրների ներկայացուցիչները ՄԱԿ-ի հատուկ կոմիտեում¹⁷։ Հետևաբար, երիտասարդ ազգային պետություններն ունեն բոլոր հիմքերը՝ վերանայելու իրենց իրավախորդի պայմանագրային հարաբերությունները։ Միաժամանակ, նոր պետությունների համար նպատակահարմար չէ իրենց իրավախորդի պայմանագրային ամբողջության ընդունումը կամ մերժումը։ Ուրեմն, համապարփակ իրավահաջորդությունը բացառվում է։ Մասնակի իրավահաջորդությունը շատ բանով պայմանավորված է տվյալ պայմանագրային սիստեմի բնույթով և միջազգային իրավունքի նոր սուբյեկտի անկախության աստիճանով։ Իրավախորդի պայմանագրերը ուժի մեջ թողնելու, այդ պայմանագրերը չեղյալ հայտարարելու կամ վերակնքելու ձևերն ու մեթոդները կախված են իրավահաջորդ պետությունում իշխանության գլուխ անցած դասակարգի սովորեն կամքից։

Երիտասարդ ազգային պետությունների պրակտիկայում իրավահաջորդության պրոբլեմը ծագում է նաև տարածքային փոփոխությունների հետևանքով։ Այդ դեպքում իրավահաջորդության հարցերը կարգավորվում են այդ պրոցեսն իրավաբանորեն ձևակերպող ակտերով։ Տարածքային փոփոխությունների մեջ հատկապես բարդ իրավական հետևանքներ են ծնում պետությունների միավորումը և տրոհումը։

Ըթե միջազգային իրավունքի նոր սուբյեկտն առաջացել է երկու կամ ավելի պետությունների միավորումից, որի հետևանքով նրանք դադարել են որպես ինքնուրույն պետություններ գոյություն ունենալուց, ապա նախկին

¹³ Տե՛ս J. Kirsten, Zum völkerrechtlichen Institut der Staatennachfolge („Staat und Recht“, Berlin, 1960, n. 6, էջ 981)։

¹⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 983։

¹⁵ Տե՛ս Л. Оппенгейм. Международное право, т. I, М., 1948, էջ 163; О'Коннелл, Правосuccession государств, М., 1957, էջ 68։

¹⁶ Տե՛ս „Journal du droit International“, 88^e Année (1961), № 1, էջ 100—102։

¹⁷ Տե՛ս Док. ООН А/6230, էջ 307։

սուրյնկտներին միջազգային պայմանագրերն իրենց ուժը պահպանում են նրանցից յուրաքանչյուրի տարածքում: Իսկ եթե պետությունների միավորման հետեանքով առաջացած միջազգային իրավունքի նոր սուբյեկտի անդամները պահպանում են որոշ միջազգային իրավասուբյեկտություն, ապա նրանց պայմանագրերն իրենց ուժը պահում են այն դեպքում, երբ դրանք համատեղելի են իրենց նոր կարգավիճակի հետ: Այսպես, օրինակ, Արաբական Միացյալ Հանրապետության (ԱՄՀ) ստեղծումից հետո նախկինում Եգիպտոսի և Սիրիայի կնքած միջազգային պայմանագրերն իրենց ուժը պահպանեցին ԱՄՀ-ի համապատասխանաբար սիրիական ու եգիպտական մասերում: Այդ սկզբունքն ամրապնդվեց ԱՄՀ-ի 1958 թ. մարտի 5-ի ժամանակավոր սահմանադրությունում¹⁸ և իր աբտահայտությունը գտավ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին ԱՄՀ-ի կառավարության 1958 թ. մարտի 1-ին հղած նոտայում¹⁹:

Միջազգային-իրավական գրականության մեջ Եգիպտոսի և Սիրիայի միավորման հետ կապված մի շարք հարցեր աշխույժ վեճերի տեղիք են տվել: Միասնական տեսակետ գոյություն չունի այն մասին, թե արդյո՞ւ միավորման հետեանքով նոր սուբյեկտ առաջացավ, թե՞ ոչ: Մի շարք հետազոտողների կարծիքով ԱՄՀ-ի կազմավորմամբ ծնունդ առավ միջազգային իրավունքի մի նոր միասնական սուբյեկտ, իսկ Եգիպտոսն ու Սիրիան կորցրին իրենց միջազգային-իրավական անկախությունը²⁰: Անգլիացի միջազգայնագետ Ե. Կոտրանը գտնում է, որ Եգիպտոսն ու Սիրիան իրենց միջազգային անկախությունը պահպանեցին նոր պետության շրջանակներում²¹: Նա մոռանում է, որ ֆեդերացիայի կազմավորումից հետո, 1961 թ. հոկտեմբերի 8-ին ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի XVI սեսիային Սիրիայի պրեմիեր-մինիստր և արտաքին գործերի մինիստր Կուբբարիի հղած ուղերձում ուղղակիորեն ասված է՝ վերականգնվել է Սիրիայի անկախ պետության տատուղը²²: Պետք է համաձայնվել ամերիկյան միջազգայնագետ Ռ. Վոնգի այն տեսակետի հետ, որ ՄԱԿ-ում Սիրիայի անդամության վերականգնման պրակտիկան, ինչպես նաև միջազգային իրավունքի տեսությունը վկայում են, որ Սիրիայի Արաբական Հանրապետությունը միջազգային-իրավական այնպիսի սուբյեկտ է, ինչպիսին էր Սիրիայի հանրապետությունը մինչև 1958 թ.²³:

ԱՄՀ-ի առաջացումը հանգեցրեց այն կազմող պետությունների միջազգային իրավասուբյեկտության դադարեցմանը: ԱՄՀ-ի տրոհման ժամանակ միջազգային պայմանագրերը ինքնաբերաբար տարածվեցին միության այն մասերի վրա, որոնց դրանք վերաբերում էին: Այսպես, օրինակ, 1962 թ. մայիսի 30-ի ԱՄՀ-ի արտաքին գործերի մինիստրության նոտայում ասված է, որ Սիրիայի ստվերենության վերականգնումից հետո ԱՄՀ-ն ուժի մեջ է համարում բոլոր այն համաձայնագրերը, որոնք կնքվել էին ՍՍՀՄ-ի և ԱՄՀ-ի

¹⁸ Տե՛ս „Государство и право зарубежных стран“, с5. I, М., 1958, էջ 101.

¹⁹ Տե՛ս Mc Nair, The Law of Treaties, Oxford, 1961, էջ 622.

²⁰ Տե՛ս Н. В. Захарова, նշվ. աշխ., էջ 134, Д. И. Фельдман, Признание государств в современном международном праве, Казань, 1965, էջ 101: L. Antonowicz, Powstanie i upadek państw jako podmiot prawa międzynarodowego („Sprawy międzynarodowe“, 1968, n. 2 էջ 67).

²¹ Տե՛ս L. Antonowicz, նշվ. աշխ., էջ 87—88.

²² Տե՛ս „Правда“ 14. X. 1961.

²³ Տե՛ս „The American Journal of International Law“, 1962, № 2, էջ 488.

միջև մինչև 1971 թ. սեպտեմբերի 28-ը և վերաբերվում են Սիրիային, պայմանով, որ նախկին համաձայնագրերի դրույթները փոփոխված կամ վերացված չլինեին նոր համաձայնագրերով: Իսկ Սիրիայի Արաբական Հանրապետության 1962 թ. հունիսի 13-ի № 25 որոշման մեջ նշվում է, որ այն երկրում ու բազմակողմ միջազգային պայմանագրերն ու համաձայնագրերը, որոնք կնքվել են Եգիպտոսի հետ միավորման ժամանակաշրջանում իրենց ուժը պահպանում են Սիրիայի Արաբական Հանրապետության համար մինչև դրանց փոփոխումը կամ գործողության դադարեցումը սիրիական կամ մյուս պայմանագիր կողմերի կողմից²⁴:

Իրավահաջորդության հարցերը նման կարգով լուծվեցին նաև Տանզանիայի և Զանզիբարի միավորման ժամանակ:

Պետությունների ապահովագրացումը ընթանում է պետության տրոհման կամ անջատման ձևով: Պետության տրոհումը երկու կամ ավելի պետությունների ստեղծումն է միջազգային իրավունքի սուբյեկտի բազայի վրա: Քանի որ նոր պետությունները չեն պահպանում իրենց իրավանախորդի միջազգային իրավասուբյեկտությունը, նրանք համապարփակ իրավահաջորդության հավակնություն ունենալ չեն կարող: Զեղյալ են համարվում բոլոր այն պայմանագրերը, որոնցում պայմանադիր կողմ է տրոհված պետությունը:

Ի տարբերություն տրոհման, սեցեսիայի դեպքում միջազգային իրավունքի սուբյեկտը իր գոյությունը պահպանում է սահմանափակ տարածքի շրջանակներում:

Պետությունների տրոհումը հաճախ զուգորդվում է որոշակի բարդությունների հետ: Դրանով պետք է բացատրել առանձին պետությունների տրոհման վերաբերյալ միջազգային-իրավական դրականության մեջ տեղ գտած տարբեր մեկնաբանումները: Վիճելի են հատկապես Մալիի ֆեդերացիայի տրոհման հետ կապված մի շարք հարցերի մեկնաբանությունները:

Հայտնի է, որ 1959 թ. հունվարին Սենեգալը ֆեդերատիվ հիմունքներով միացավ Ֆրանսիական Սուդանի հետ, իսկ 1960 թ. հունիսի 20-ին հռչակվեց Մալիի անկախ ֆեդերացիան: Նույն օրը Մալիի հանրապետության № 60—35 օրենքով ազդարարվեց, որ Քանկախ ու սովբերեն պետություն Մալիի հանրապետությունը աղատ է բոլոր քաղաքական պարտավորություններից ու կապերից²⁵:

1960 թ. օգոստոսի 20-ին Սենեգալը դուրս եկավ ֆեդերացիայից, իսկ Սուդանի հանրապետությունը պահպանեց «Մալիի հանրապետություն» անվանումը²⁶:

ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդը 1960 թ. հունիսի 28-ին Մալիի ֆեդերացիային ՄԱԿ-ի անդամ ընդունելու հանձնարարական տվեց: Հոկտեմբերի 28-ին, ֆեդերացիայի տրոհումից հետո, Մալիի և Սենեգալի հանրապետությունների նկատմամբ այդ հանձնարարականները նորոգվեցին: Վերջիններս այդ պահից սկսած համարվում են ՄԱԿ-ի անդամներ: Լեզ միջազգայնագետ Լ. Անտոնովիչի կարծիքով՝ այդ երկու պետություններից և ոչ մեկին չի կա-

²⁴ Տե՛ս Док. ООН А/СN/4/150, Annex, էջ 7.

²⁵ Տե՛ս «Les constitutions des Etats africains d'expression Française». Paris, 1961, էջ 100.

²⁶ Տե՛ս Г. В. Александренко. Буржуазный федерализм, Киев, 1962, էջ 186—193.

ուլի դիտել որպես նախկին ֆեդերատիվ պետության շարունակություն: Մալիի ֆեդերացիայի տրոհման հետևանքով առաջ են եկել երկու նոր պետություններ, բանի որ ֆեդերացիայի բաղկացուցիչ մասերը զուրկ էին միջազգային իրավասուբյեկտությունից²⁷: Մինչդեռ, անգլիացի միջազգայնագետ Ռ. Հիդդինսի կարծիքով՝ Մալիի ֆեդերացիայի տրոհումը չհանդես էր ընդունում որևէ պետությունների առաջացման, այլ լուրջ ելակետ դարձավ նրանց լիակատար սուվերենության կարգավիճակի հասցնելու համար²⁸: Քանի որ Սենեգալի և Մալիի անկախությունը հռչակվել էր ֆեդերացիայի կազմավորումից առաջ, ուստի ֆեդերացիայի մեջ միավորվելուց հետո Մալիի ու Սենեգալի միջազգային իրավասուբյեկտության անընդմեջելությունը պահպանվեց: Ֆեդերացիայի տրոհումից հետո իրավաճաջորդներից և ոչ մեկը չժառանգեց իր իրավանախորդի միջազգային իրավասուբյեկտությունը, մի հանգամանք, որը վկայում է համապարփակ իրավաճաջորդության առկայության մասին:

Պետության սեցեսիայի դեպքում իրավաճաջորդության հարցերը որոշակի հետաքրքրություն են ներկայացնում՝ կապված Սինգապուրի օոինակի հետ: Սինգապուրը 1965 թ. անջատվեց Մալայզիայի ֆեդերացիայից: Դա իրավաբանորեն ձևակերպվեց 1965 թ. օգոստոսին, Սինգապուրի և Մալայզիայի միջև կնքված համաձայնագրով, որով Սինգապուրը հռչակվեց անկախ պետություն: Սակայն, այդ համաձայնագրի մի շարք դրույթների ուժով սահմանափակվում են Սինգապուրի լիազորությունները արտաքին հարաբերություններ և երկրի պաշտպանության բնագավառում²⁹:

Սինգապուրը մինչև Մալայզիայի ֆեդերացիայի մեջ մտնելը լիակատար ինքնուրույնություն ունեւր միայն ներքին գործերում: Նրա արտաքին հարաբերությունները իրականացնում էր Մեծ Բրիտանիան: Դրա համար էլ այս դեպքում առկա է տարածքի անջատում և դրա հիման վրա ինքնուրույն պետության՝ Սինգապուրի հանրապետության ստեղծում: Նման դեպքերում կիրառվում է մասնակի իրավաճաջորդության սկզբունքը:

Այսպիսով, Ասիայի և Աֆրիկայի երիտասարդ ազգային պետությունների միջազգային-իրավաբան պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ պետությունների իրավաճաջորդության պրոբլեմը երևան է դալիս պետությունների առաջացման ինչպես առաջնային, այնպես էլ երկրորդային պրոցեսների հետևանքով: Առաջին դեպքում, որպես կանոն, գործում է մասնակի իրավաճաջորդության սկզբունքը, երկրորդ դեպքում, դրանից բացի, կիրառվում է նաև համապարփակ իրավաճաջորդության սկզբունքը:

ВОПРОСЫ ПРАВОПРЕЕМСТВА В МЕЖДУНАРОДНО-ПРАВОВОЙ ПРАКТИКЕ МОЛОДЫХ ГОСУДАРСТВ

В. А. МАРУХЯН

Р е з ю м е

В современных международных отношениях повысилась роль правопреемства государств. Институт правопреемства государств получил

²⁷ St'u L. Antonowicz, նշվ. աշխ., էջ 69:

²⁸ St'u նույն աեղում, էջ 70:

²⁹ St'u В. Г. Графский, Б. С. Страшун, Федерализм в развивающихся странах, М., 1968, էջ 173:

широкое применение и значительное развитие в международных отношениях молодых национальных государств Азии и Африки. Международно-правовая практика новых государств, как правило, отвергает буржуазную доктрину правопреемства. При первичном процессе образования этих государств не вызывает сомнений переоценка международно-правового наследия государства-предшественника в современном международном праве. Тем самым, исключается применение принципа универсального правопреемства, тогда как при вторичном процессе образования этих субъектов международного права имеет место как универсальное, так и частичное правопреемство.